



Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

Կ Ա Պ Տ Ա Վ Ա Ն Ք

ՇԱՄՇԱԴԻՆԻ ՇՐՋԱՆ

1



Եր նախորդ հոգևածում հիշել էինք, որ Հասանի-ջուր (Հասանսու) գետակի վերին հոսանքում, Շխմուրատի Աստվածածնի անվան վանքի մոտերքում, գետակի աջ ափին, գտնվում է Կապտավանքը:

Թեև այդ վանքերը ուղիղ գծով իրարից մոտավորապես երկու կիլոմետր հեռավորության վրա են գտնվում, սակայն միմյանցից կտրված են, անջատված լինելով գետակի մեծ խորությամբ ունեցող, անանցանելի ձորով: Թեև տեղացիներին միայն ծանոթ և մատչելի անտառային դժվարագնաց կածաններով կարելի է այդ կողմից մի վանքից մյուսը գնալ:

Կապտավանք գնալու միակ հարմար և հեշտ ճանապարհը շրջկենտրոնից՝ Բերդից է, ջինջին գյուղի վրայով, որի սահմաններում էլ գտնվում է վանքը, մոտավորապես շուրս կիլոմետր հեռու, հարավ-արևմտյան ուղղությամբ, դեպի Նավուր տանող ճանապարհից ցած, ձորալանջին:

Այդ հուշարձանը շինված է մի ընդարձակ, դեպի ձորը հակված թեքությամբ ու գեղեցիկ դիրք ունեցող բացատում, ձորափից քիչ հեռու: Այդ բացատը, որի կենտրոնից մի սառնորակ աղբյուր է բխում, երեք կողմից պատված է անտառապատ բարձր քարաժայռերի աղեղնաձև շղթայով, որի ծայրն ընդհուպ մոտենում է ձորափին, վանքի մոտ: Բացուտի

շորորդ՝ հյուսիս-արևելյան կողմից մի ընդարձակ, հիանալի տեսարան է բացվում Հասանի-ջուր գետակի երկար ձորի վրա, որը երկու զուգահեռ ընթացող անտառապատ լեռնաշղթաների միջով ձգվում է մինչև Պառավաքար գյուղից այն կողմ և միանում մերձկուրյան տափաստանին:

2

Կապտավանքը փոքր չափերի մի անպաճույճ հուշարձան է, շինված կապտադուլբ բազալտի մեծ ու միջակ մեծությամբ, կոփածո, թեթևակի ձևավորված քարերով, զուգված կրաշաղախով: Իր արտաքին տեսքով հուշարձանը մեծապես ներդաշնակվում է շրջակա բնությանը: Քիչ հեռվից դիտողին թվում է, թե մոտակա ժայռերի մի մասն է դա, բացուտի մեջ դեպի վեր խոյացող, բերդաձև մի քարաժայռ: Դարերի ընթացքում նրա տանիքի վրա և պատերի մեջ խորն արմատակալած թփերն ու մացառները ևս ավելի ուժեղացնում են այդ տպավորությունը:

Ներկայումս վանքը միայն մի շենք ունի՝ եկեղեցին: Սակավաթիվ անտիպ և տպազրկված աղբյուրներից երևում է, որ եկեղեցուն կից եղել են ժամատուն և մոտերքում միաբանության բնակելի շենքեր, իսկ շուրջը՝ գերեզմաններ: Սակայն այդ բոլորից ներկայումս որևէ հետք չի մնացել, եթե հաշվի չառնենք եկեղեցու պատերի մոտերքում թափված աննշան քարակույտերը, որոնք որևէ շենքի հատակագիծ անգամ չեն ցուցաբերում:

Կապտավանքի եկեղեցին դասից երկարավուն քառակուսի ձև ունի, երկարությամբ


1 «Էջմիածին» ամսագրի 1956 թվականի մարտ ամսվա համարում:

(արևելքից արևմուտք) 11,40 մետր, իսկ լայնքը՝ 9,46 մետր: Շենքը ներսից խաչաձև է, աբսիդը խորն ընկած: Աբսիդի երկու կողքերին և շենքի հյուսիս արևմտյան անկյուններում տեղավորված են չորս փոքրիկ խորաններ (ավանդատուններ), երկարավուն քառակուսի հաստակագծով: Խորանների նիզ և ցածրիկ մուտքերը բացված են, արևելյան ղույգիմը եկեղեցու հյուսիսային և հարավային պատերին կից, իսկ արևմտյան ղույգիմը՝ նույն կողմի պատին կից: Խորանների պեպի եկեղեցու կենտրոնը նայող անկյունների վրայից բարձրանում են գմբեթի ծանրովյունը կրող չորս փոքրիկ կամարներ: Խաչվեքը թաղապատ են: Լուսավորությունը շատ աղուտ է, սակավաթիվ նիզ ու կարճ լուսամուտների պատճառով, որոնց մեծ մասը դրսից պատի մեջ բացված ձեղքերի են նմանվում: Ամենամեծ լուսամուտը, որը բացված է աբսիդի արևելյան պատի մեջ, դրսից 0,47 մետր բարձրություն ունի, իսկ գմբեթի չորս գլխավոր կողերի և խորանների մեկական լուսամուտների բացվածքները դրսից 20—29 սանտիմետր բարձրություն ունեն: Պատերի հաստությունը միաշափ չէ ամեն տեղ. դրանց թանձրությունը տատանվում է 0,8-ից մինչև 1,07 մետրի միջև: Հուշարձանն ունի երկու մուտք՝ արևմտյան և հարավային կողմերից, 1,46×1,15 մետր բացվածքով: Խաչաձև տանիքի կենտրոնից բարձրանում է ութ կողմանի գմբեթը, որի թմբուկի բարձրությունը, հաշված սաղարի ցլիկից մինչև վեղարի քիվը, 2,77 մետր է:

Հուշարձանը որևէ զարդարանք չունի: Արտաքին տեսքին բազմազանություն է տալիս միայն գմբեթի վեղարի տակի քիվը և դրանից ցած թմբուկի քարերի վերին շարքը, որոնք սրբատաշ վարդագույն տուֆից են շինված, այն էլ վերանորոգություններից մեկի ժամանակ: Ինչպես արտաքուստ երևում է, հուշարձանը մի քանի անգամ վերանորոգվել է: Պատերի վերջին վերանորոգությունը կատարված է ավելի մանր քարերով, առանց քարաշարքերի հորիզոնական գծերը պահպանելու:

Ներկայումս հուշարձանը կանգուն է, բայց վերանորոգության կարիք ունի, որովհետև քանդված են արևմտյան և հարավային խաչվեքի թաղերը և թափված են տանիքի և վեղարի երեսպատ սալերը, ինչպես և պատերի վերին շարքերը:

Այս հուշարձանը հետագա քայքայումից զերծ պահելու համար կարիք ունի թեթև վերանորոգման, որն այնքան էլ մեծ ծախս չի պահանջում, մանավանդ, որ դրա համար պետք եղած կարևոր շինանյութը՝ քարը՝ տեղում կա:



ԿԱՊՏԱՎԱՆՔ. — Եկեղեցու տեսարանը արևմուտքից

3

Վերջացնելով կապտավանքի եկեղեցու համառոտակի նկարագրությունը, ավելորդ չենք համարում մի երկու խոսք ասել այս հուշարձանի շինարարության մեջ նկատված աչքի ընկնող երևույթների մասին: Հայտնի է, որ մեր ճարտարապետության մեջ կառուցվածքների համապատասխան մասերի համաչափությունը երբեմն խախտվում է շինարարների կողմից: Այդ երևույթը կապտավանքի եկեղեցու շինարարության մեջ արտակարգ չափազանցության է հասցված: Մեր ասածը հաստատելու նպատակով, հուշարձանի նկարագրության մեջ հիշված մի քանի մասերի, օրինակ՝ լուսամուտների չափերի և պատերի հաստության բազմազանության փաստերին կարելի է ավելացնել խորանների և դրանց մուտքի բացվածքների անհամաչափության փաստերը, որոնք ակնբախ են հետևյալ համեմատական ցուցակից.

Հյուսիս-արևելյան խորանի չափերը՝ 2,28×1,80 մ., մուտքի բացվածքը՝ 0,60 մ.

Հարավ-արևելյան խորանի չափերը՝ 1,94×1,18 մ., մուտքի բացվածքը՝ 0,72 մ.

Հյուսիս-արևմտյան խորանի չափերը՝ 2,15×1,18 մ., մուտքի բացվածքը՝ 0,90 մ.

Հարավ-արևմտյան խորանի շափերը՝ 2,48X1,03 մ., մուտքի բացվածքը՝ 0,80 մ.²։ Ինչպես տեսնում ենք, այդ շափերից միայն երկուսն են համընկնում խոր՝ հերթականությամբ երկրորդ և երրորդ խորանների լայնքը, բայց դրանք էլ շենքի համապատասխան մասերին չեն վերաբերում։

Մեր կարծիքով բերված փաստերն ապացույց են այն բանի, որ Կապտավանքի Կեկեղեցու շինողը հմուտ ճարտարապետ չի եղել, կամ թե շենքը շինվել է առանց որևէ մասնագետ շինարարի ղեկավարության, պարզապես սովորական որմնադիրների ձեռքով, որոնք այնքան էլ բժախնդիր չեն եղել այդ դրծում։ Սակայն, պետք է ասել, որ հիշյալ և դրանց նման այլ թերությունները շենքի պատկերը չեն աղավաղում և ընդհանուր տեսքը մնում է իր պարզությամբ տպավորիչ։

Մեր երկրորդ դիտողությունը վերաբերում է ենթադրեթյալի տրոմպների դրությունն այս հուշարձանի շինարարության մեջ։ Հայտնի է, որ հայկական ճարտարապետության 7—10-րդ դարերի շրջանում զմբեթակիր շենքերի շինարարության մեջ ենթադրեթյալին քառակուսի տարածությունից անցումը կլոր կամ բազմակողմանի զմբեթին կատարվում էր տրոմպների միջոցով։ Երևարարական տեսնելիայի այս միջոցառումը հետագայում փոխվեց և հիշյալ անցումը կատարվում էր առաքաստների միջոցով²։ Հետևաբար տրոմպների կիրառումը 12-րդ դարի զմբեթակիր շենքի մեջ ուշագրավ երեւույթ է։

4

Կապտավանքի մասին մատենագրական հիշատակություններ չկան։ Թերևս տեղի հեռավորության և հաղորդակցության ճանապարհների դժվարության պատճառով, մեր հին բանասերներն էլ այս հուշարձանն այցելելուց խուսափել են, բացառությամբ Մակար եպիսկոպոս Բարխուդարյանի։ Այս իսկ պատճառով հուշարձանի անվան, շինողի և շինարարության ժամանակին վերաբերող հարցերը մինչև օրս էլ պարզաբանված չեն։ Տվյալ հարցերին պատասխան ստանալու համար իրեն միակ աղբյուր մտնում է հուշարձանի պատերին պահված վիմագրությունը, որն այնքան էլ հարուստ չէ, և եղածն էլ վիճելի է։ Այնուամենայնիվ եղած տվյալներն օգտագործելով, փորձենք հնարավոր եզրա-

կացություններն անել, առաջադրված հարցերի նկատմամբ։

Նախ, պետք է ասել, որ վիմագրությունից հուշարձանի անունը պարզել հնարավոր չէ։ Արձանագրություններում յոթ տեղ հիշված է «եկեղեցին», մի տեղ (Մ 8) «կաթողիկէ» և մի տեղ էլ (հարավային մուտքի աջակողմյան ցածի քարի վրայի շվեդական արձանագրության մեջ) «վանք» բառերը, առանց որևէ անուն տալու։ Ինչ վերաբերում է «Կապտավանք» անվան, դրա մասին որևէ հիմնավորված բացատրություն մեզ հայտնի չէ։ Հավանաբար, ըստ ընդունված կարծիքի, այդ անունը ծագել է հուշարձանի քարերի գույնից (կապտագույն բազալտ)։

5

Կապտավանքի եկեղեցին շինողի ով լինելու և շինության ժամանակի հարցերը լուծելու համար իրեն հիմք կարող էր ծառայել բանասեր Մակար եպիսկոպոս Բարխուդարյանի բերած շինարարական բնույթի այն արձանագրությունը, որը ղեկավարված է նրա «Արցախ» աշխատության 332-րդ էջում³։ Այդ արձանագրությունից կարելի է եզրակացնել, որ ոմն Հանես իր հոգու համար կառուցել է եկեղեցին Ո (1151) թվին և դրա համար նոր կիրակիին մեկ օր պատարագ է ստացել։ Որևէ այլ աղբյուրի բացակայության պայմաններում այդ արձանագրությունը կարևոր նշանակություն է ստանում Կապտավանքի պատմության համար, որովհետև դրանում հիշատակված են և՛ շինողի անունը և՛ շինարարության թվականը։ Սակայն երկու հանգամանք մեզ ստիպում են թերահավատությամբ վերաբերվել այդ արձանագրությանը։ Նախ, առաջին իսկ հայացքից, տարօրինակ է թվում այն հանգամանքը, որ մի եկեղեցի կառուցելու համար, եթե նույնիսկ դա լինի մի հասարակ, գյուղական եկեղեցի, շինողին տրվի մեկ օրվա պատարագ (թեև արձանագրության մեջ «պատարագ» բառը բացակայում է, բայց դա ինքնին հասկանալի է)։ Մեր կրոնական տիպի հուշարձանների վիմագրությունից հայտնի է, որ Կապտավանքի եկեղեցու շինության ժամանակաշրջանում, այսինքն 12-րդ դարում, մեկ պատարագի սակագինը 20 դահեկանի էր հավասար, իսկ այդ գումարը բնավ համարժեք չէ մի եկեղեցու շինարարական ծախսերին։

Երկրորդ և ավելի կարևոր հանգամանքն այն է, որ այդպիսի արձանագրություն ոչ միայն եկեղեցու արևմտյան դռան վրա, որտեղ պետք է լինի այդ, ըստ բանասերի

² Այս հոդվածում բերված բոլոր շափերը քաղված են ճարտարապետական հուշարձանների պահպանության կոմիտեի վերջերս կատարած չափագրությունից։

³ Թորոս Թորամանյան, Հայկական ճարտարապետություն, 1-ին հատոր, Երևան, 1942 թ., էջ 206։

⁴ Մակար եպիսկոպոս Բարխուդարյան, Արցախ, Բաքու, 1895 թ.։

ցուցմունքի, այլև որևէ տեղ հուշարձանի պատերին, գոյութիւն չունի: Նշված տեղում կա մեր № 1-ի տակ բերված Գորգըմբերի որդի Աշիշերին պատկանող, շինարարական բնույթ չունեցող արձանագրութիւնը, որը բանասերը գետնից է հարավային դռան վրա, վերագրելով Աշիշէր որդի Գորգըմբը ըմբերիս»-ին: Ստուգելու համար, թե արդյո՞ք չենք սխալվել Կապտավանքի վիմագրութիւնը գրի առնելու ժամանակ և բաց թողել այդպիսի կարևոր արձանագրութիւն, վիմագրական մեր նյութերը համեմատեցինք Ճարտարապետական հուշարձանների պահպանության կոմիտեի արխիվի № 377 գործում եղած նմանօրինակ նյութի հետ և այդտեղ ևս Մակար եպիսկոպոս Բարխուդարյանի բերած արձանագրութիւնը չգտանք:

Շարունակելով պրոպոսումները, Կապտավանքի վիմագրական նյութերը մշակելու ժամանակ մեր ուղարկութիւնը դրավեց այն հանգամանքը, որ մեր № 7-ի և 8-ի տակ դրված երկու արձանագրութիւններում որոշ բառեր և բառամասեր նման են Մակար եպիսկոպոս Բարխուդարյանի բերած արձանագրության մեջ եղածին:

Որպեսզի հիմնավորված և հասկանալի լինի մեր եզրակացութիւնն այս խնդրի առթիվ, անհրաժեշտ ենք համարում կարճատև նկարագրել այդ երկու արձանագրութիւնները:

ՄԱԿԱՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻ
ԲԵՐԱԾ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա ար պասխային Նոր Կիրակին
ես Հանէս արդեամբ կառուցի
եկեղեցիս հոգոյ իմոյ... րվ. Ո.

Ըստ գրերի ձևի № 7 արձանագրության «պատ» վանկի «տ» գիրը կարելի է շփոթել «ա» գրի հետ, իսկ «նաթ» վանկի «թ» գրի գլուխը համարել «ք», որով ստացվել է «պասխային» բառը: 8-րդ արձանագրութիւնից «Հաղարդեղէս»-ը դարձել է «Հանէս», «գիմ հոգո» բառերը՝ «հոգոյ իմոյ»: «Արդեամբ կառուցի» բառերն ինքը՝ բանասերն է ավելացրել: Միակ իրավացի հավելումը «թիվ» (թիվ) բառն է Ո թվագրից առաջ:

Արձանագրութիւնների այս համեմատու-

րը: Դրանք, երկուսն էլ, փորագրված են վանքի հարավային մուտքի վրա իբրև բարավոր գործադրված մի խոշոր, նեղ, մոտավորապես 1,5×0,5 մետր չափեր ունեցող բազալտ քարի վրա: Քարը հղկված չէ: Արձանագրության գրերը, քարի կարծրության պատճառով, խորը չեն փորագրված, և անկանոն, անկյունավոր ձևավորութիւն ունեն: Երկու արձանագրութիւնն էլ, ըստ երևույթին, մի գրչի գործ են, որը տեղ տեղ բաց է թողել որոշ գրեր և բառամասեր: Այս բոլորն ի մի առած, խիստ դժվարացնում են այդ արձանագրութիւնների վերծանութիւնը, որը կատարել ենք վերապահութեամբ, փակագծերի մեջ լրացնելով մեր ենթադրած պակասը: Պետք է նշել, որ № 8 արձանագրության վերջին չորս շարքերը, որոնք ամենակարևոր մասն են կազմում, առանց պակաս գրերի լրացման որևէ իմաստ չեն տալիս:

№ 7 և 8 արձանագրութիւնները տեղավորված են հետևյալ կարգով. 7-րդը ձախից, քարի վերին անկյունում, երկու կարճ շարքով, իսկ 8-րդը նախորդի տակ, քիչ աջ, քարի կենտրոնում: Ըստ երևույթին այդ երկու արձանագրութիւններից 8-րդը փորագրվելուց հետո, քարի ձախակողմյան անկյունում տեղավորվել են 7-րդը:

Այժմ բերենք մեզ հետաքրքրող արձանագրութիւնները զուգահեռ տեղադրությամբ.

ՎԱՆՔԻ № 7 և 8 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

№ 7 Ա ար պատ(արագ) Խաթ(ունին)
Նոր Կիրակին

№ 8 Ես Հաղարդեղէս մի(ա)-

բանեցա սը կաթողիկէ-

ս զիմ հոգո ճար կայր յԱյ
եկեղ(եց)իս գին (մ)եծա(գ)նի

Այ ես նուիրեցի

աւծա(ւ ա)յն

Ո

Յիշուից այն եզրակացության ենք հանգում, որ բանասեր Մակար եպիսկոպոս Բարխուդարյանը հուշարձանի հարավային մուտքի բարավորի քարի վրայի իրար տակ փորագրված երկու արձանագրութիւնները համարել է իբրև մեկ արձանագրութիւն և սխալ վերծանումով, փոփոխութիւններով ու հավելումներով ստացել է շինարարական բնույթի մի արձանագրութիւն, որը փաստորեն գոյութիւն չունի և այդ տեղադրել արևմտ-

⁵ Ընդգծված են այն բառերը, որ չկան № 7 և 8 արձանագրութիւնների մեջ:

⁶ Ընդգծված են այն բառերը և բառամասերը, որ կան Մակար եպիսկոպոս Բարխուդարյանի բերած արձանագրության մեջ:

յան մուտքի բարավորի վրա: Այսպիսով Կապտավանքի «շինարարական արձանագրությունը» կորցնում է իր արժեքը և դրա հետ մեկտեղ ի չիք է դառնում և շինողի անունը:

Սակայն Կապտավանքի շինարարության ժամանակի հարցը դրանով չի փակվում: Վերապահությունը վերծանված № 8 արձանագրությունից պարզվում է, որ ումն Հազարդեղ իր հոգու (փրկության) համար մեծագին նվեր է տալիս եկեղեցուն և Աստուծուն և ավելացնում. «օծաւ այն», որից պետք է եզրակացնել, որ հիշյալ մեծագին նվերը, որի ինչ լինելը չի ասված, շինքն ավարտելու համար է եղել, որով հնարավոր է եղել դրա օծումը: Արձանագրության վերջում, հատուկ

շարքում դրված Ո գիրը, ինչպես Մակար եպիսկոպոս Բարխուդարյանն է վերծանել, պետք է համարել եկեղեցու օծման և հետևապես շինության ավարտի թվագիրը: Այսպիսով պետք է ընդունել, որ Կապտավանքը կառուցված է 1151 թվականին: Հուշարձանի պատերին պահված թվագիր ունեցող արձանագրությունները (ՈԶԳ և ՈՂԲ թվականներին) կասկածի տակ չեն դնում այդ շինարարական թվականը:

Հազարդեղի արձանագրությունից (№ 8) միաժամանակ կարելի է հզրակացնել, որ Կապտավանքի եկեղեցին մեկ մարդու շինած չէ, այլ շինարարությունը կատարված է զանազան անձանց օժանդակությամբ, որոնցից միայն վերջինի անունն է մեզ հասել:

Վ Ի Մ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

Կապտավանքի վիմագրությունը հարուստ չէ: Եկեղեցու պատերին պահված կան միայն 9 արձանագրություններ, որոնցից վերջինը, որը փորագրված է հարավային մուտքի աջ կողմում, ցածի մեծ քարի վրա, մեզ չհաջողվեց լրիվ վերծանել, որովհետև տեղ-տեղ քարը հողմահարված է, որոշ տեղերում էլ թեթևակի գծված գրերը ծածկված են կրաշրի շիթերով: Արձանագրության մի մասն էլ մուտքի դռան շրջանակն է ծածկել: Քանի որ վերծանված մասերը իրար կապակցված չմասն չունեն, այդ պատճառով էլ հրատարակության չի տրվում:

Պետք է նկատել, որ արձանագրությունների մեծ մասը քարի (բազալտ) կարծրության պատճառով խոր չեն փորագրված. մի քանի արձանագրություններում էլ փորագրվածները գրերին կանոնավոր ձև չեն տվել, կամ բառերի մեջ որոշ գրեր և վանկեր բաց են թողել, որով վերծանումը դժվարանում է:

Մեր վերծանումների մեջ փակագծերի գործածությունը նույնն է, ինչպես «Էջմիածին» ամսագրում տպագրված մեր նախորդ հոդվածներում: Աստղանիշով նշված են այն արձանագրությունները, որոնք առաջին անգամ են հրատարակվում:

1. ԱՐԵՎՄՏԱՆ ՄՈՒՏՔԻ ԲԱՐԱՎՈՐԻ ՔԱՐԻ ՎՐԱ.

1. ԱՆՈՒԱՄԲՆ ԱՅ ԵՍ ԱԶԻՇԷՐ ՈՐՈՂԻ ԳՈՐԳՆՄԲԵՐՈՒՆ
2. ՄԻԱՅԵԲԱՆԵՑԱՅ ԱՅՍ ԵԿԵՂԵՑԻՍ ԲՆԱԿԻՉԸ ԵԿ(ԵՂ)ԵՑՈՒՅՍ ԳՐԵՑԻՆ
3. Բ. ՊԱՏԱՐԱԳ ՅԱՄՆ ՃՐԱԳԼՈՅՆ ՄԻՆ ԻՆՁ ՄԻՆ ԱՍՈՒՍՆՈՅ ԻՄՈ ԿԱՏ-
4. ԱՐՈՂԵՆ ԱԻՐՆԵ(Ա)Լ ԵՂԻՑԻՆ ԽԱՓԱՆՈՂԵՆ ԱՆԷՍՍ ԱՐՑԵՆ ՅԱՅ.

* 2. ՆՈՒՑՆ ՔԱՐԻ ԱՋ ԾԱՅՐԻՆ.

1. ԿԱՍԱԽՆ ԱՅ ԵՍ ԾԱՏ-
2. ԲԱՐԻ ՄԻԱԲԱՆԵՑԱՅ ԱՅՍ ԵԿԵՂԵՑԻՍ
3. ԿԱՂ ԵՒ ՄԻԱԲԱՆԵՍ ԳՐԵՑԻՆ Բ. ՊԱՏ-
4. ԱՐԱԳ ՍՈՒՐԲ ՍԱՐԳՍԻՆ ՄԻՆ ԾԱՏԲ-
5. ԱՐԷ ԵՒ ՄԻՆ ԱՍՈՒՍՆՈՒՆ ԻՒՐՈՅ Կ-
6. ԱՏԱՐՈՂԵՆ ԱԻՐՆԵ(Ա)Լ ԵՂԻԱԼ Է
7. ՈԿ ԽԱՓԱՆԷ ԻՍ (Մ)ԵՂԱՑՆ ՊԱՐՏ-

ԾԱՆՈԹ. 1.— Այս երկու արձանագրություններն էլ միևնույն գրչի գործ են: Այս հանգամանքը մեզ օգնեց № 1 արձանագրության 1 շարքում հիշված «Աջիշէր» անձնանվան ճիշտ ընթերցմանը: Մակար եպիսկոպոս Բարխուդարյանն այդ անունը կարդացել է «Աջիշէր». կարելի է կարդալ և «Աջիհէր», սակայն նկատի ունենալով № 2 արձանագրության մեջ երկու տեղ «Ե» գրի նույն ձևի կրկնությունը «Շատրաբի» անվան սկզբում, ըստ այնմ էլ ընդունեցինք «Աջիշէր» ընթերցումը:

2.— № 2 արձանագրության 3-րդ շարքի սկզբի կրճատ «վադ» բառը վերծանում ենք իբրև «վարդապետ»:

3. ՆԱԽՈՐԴԻՑ Ա.Ջ.

1. ՈՋԳ: ԵՍ ԱՐԼԸ-
2. ԱՍԱՆ ՄԻԱՐԱ-
3. ՆԵՑԱՅ ԱՅՍ ԵԿ-
4. ԵՂԵՑԻՍ ԵԻ ՀԱՅՐՍ
5. ԵԻ ՄԻԱՐԱՆՔՍ ԳՐԵՑԻՆ Մ-
6. ԻՆ ԱԻՐ ՊԱՏԱՐԱԳ Զ-
7. ՄԲ ԽԱԶԻՆ ՈՐ ԽԱՓԱՆԷ
8. ԻՍ (Մ)ԵՂԱՑՆ ՊԱՐՏԱԿԱՆ Է

* 4. ՆԱԽՈՐԴԻՑ ՏԱԿ, ՆՈՒՑՆ ԳՐԵՐՈՎ.

1. ԵՍ ՍԱՐԳԻՍ ՀԱՅՐԱՊԵՏԱՆ
2. ԹՈՐՆ ՄԻԱՑԲԱՆԵ(Ց)ԱՅ Ա(Յ)Ս ԵԿԵ(ՂԵ)ՑԻՍ ԷՏ-
3. ՈՒ Ի. ՀՈՂ ԽՈՏԱՑՏԵՂ ԵԻ ԳՈՐԳ ԵԻ ՄԻԱՐ-
4. ԱՆՔՍ ԳՐԵՑԻՆ ՄԻՆ ԱԻՐ ՊԱՏԱՐԱԳ ԱԾ(ԱԾ)-
5. ՆԻՆ ՈՎ ԽԱՓԱՆԷ ԱՆԻԾԱԾ (Է)

* ՆԱԽՈՐԴԻՑ Ա.Ջ, ԱՎԵԼԻ ԽՈՇՈՐ ԵՎ ԿԱՆՈՇԱՎՈՐ ԳՐԵՐՈՎ.

1. Ի ԹՎ ՈՂԲ:ԵՍ ՅՈԿ...
2. ՄԻԱՐԱՆԵՑԱ ԵԿԵՂԵՑՈ[ՅՍ]
3. ԵՏՈՒ ԶՄԱՍՆ ԵԻ ՆՈԱՋՆ-
4. ՈՐՂԵ ՄԲ ՈՒԽՏԻՍ ՏՎԻՆ Ի
5. ՏԱՐՈՋՆ :Ա: ԱԻՐ ԺԱՄ Ի ՆԱ(Ի)-
6. ԱՍԱՐԴԻ Ի ՏԱԽՆԻ ՄԲ ԿԱՐԱՊ(ԵՑԻ)
7. ԱՆԽԱՓԱՆ ՈՐԵ ՈՋ ԱՐՆԵՆ
8. ԴԱՏԻՆ ՅԱՅ:ԵԻ ԿԱՏ-

* 6. ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԵՎՄՏՑԱՆ ՄՈՒՏՔԻՑ ՎԵՐԵՎԻ 4-ՐԴ ԵՎ 3-ՐԴ ՇԱՐՔԵՐԻ ԵՐԿՈՒ ՔԱՐԵՐԻ ՎՐԱ. ԵՐՐՈՐԴ ՇԱՐՔԻ ՔԱՐԻ ԶԱԽ ԾԱՅՐԸ ՎԵՐԻ ՇԱՐՔԻ ՔԱՐԻ Ա.Ջ ԾԱՅՐԻ ՏԱԿԻՆ Է.

1. ԿԱՄԱԻՆ ԱՅ ԵՍ ՎԱՐՇ-
2. ԱՍ ԵԻ ԶԱԻԷՆ [ՈՐ]-
3. ԴԻ(Ը) ՇԱՊՈՒՀՈՑ
4. ՄԻԱՑԲԱՆԵՑԱԸ ԷԿԵՂ-
5. ԷՑԻՍ ԱՌԱՋ(Ն)ՈՐ(Դ)ՔՍ ԷՏՈՒՆ :Բ:
6. ՊԱՏ. ԾԱՌՋԱՐԴ(ԱՐԻՆ) ԿԱՏ[ԱՐ]-
7. ԻՋԸ ԱԻ(Ր(ՀՆԻ(Ն) ՅԱՅ ԽԱՓ.ԻՋԸ
8. ԴԱՏ(ԻՆ) ՈՐՋ(Ա)Փ ՄԷԸ Կ(ԵՆ)ԴԱՆԻ Ե(Մ)Ք ՄԵՐ
9. ԾՆ(Ո)ՂԱՑՆ

ԾԱՆՈԹ.— 6-րդ շարքի «պատ.»==պատարագ և 7-րդ շարքի «խափ.իլը»==
«խափանիլը» բառերում պահաս վանկերը շնչք լրացրել, որովհետև այդ տեղերում
կետ է դրված, հավանաբար իբրև կրճատման նշան:

* 7. ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՄՈՒՏՔԻ ՔԱՐԱՎՈՐԻ ՔԱՐԻ ՎՐԱ, ԶԱՆ ՄԱՅՐԻՆ, ՎԵՐԵՎԻՑ:

1. Ա ԱԽՐ ՊԱՏ(ԱՐԱԳ) ԽԱԹ[ՈՒՆԻՆ]
2. ՆՈՐ ԿԻՐԱԿԻՆ

* 8. ՆԱԽՈՐԻԿՑ ԶԱՄ, ՔԱՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՍՈՒՄ:

1. ԵՍ ՀԱԶԱՐԴԵՂԵՍ ՄԻ(Ն)-
2. ԲԱՆԵՑԱ ՄԲ ԿԱԹՈՂԻԿԵ-
3. Ս ԶԻՍ ՀՈԳՈ ՃԱՐ ԿԱՅՐ ԶԱՅ
4. ԵԿԵՂ[ԵՑ]ԻՍ ԳԻՆ (Մ)ԵԾԱ(Գ)ՆԻ
5. ԱՅ ԵՍ ՆՈՒԻՐ(ԵՑԻ)
6. ԱԽԾԱ(Ի Ա)ՅՆ

Ո

ՄԱՆՈՒՑ. 1.— 7-րդ և 8-րդ արձանագրությունների փակագծերի մեջ գրված բառամասերի և գրերի լրացումը կատարվում է վերապահությամբ:

2.— 5-րդ շարքի «ԱՅ» կրճատ բառի Ա գիրը փոխադրված է առանց որոշիչ նիշի, իբրև Սյ, որը մենք ուղղել ենք:

3.— 7-րդ շարքի Ո գիրը մենք ևս ընդունում ենք իբրև թվագիր:

9. Եկեղեցու հարավային մուտքի աջակողմյան ցածի խոշոր քարի վրայի ընդարձակ արձանագրությունը մեզ չհաջողվեց լրիվ վերծանել, թեթևակի դժագրված գրերի հողմահարման, կրաքրի շիթերով և դռան շրջանակի տակ ծածկված լինելու պատճառով: Այդ արձանագրության սկիզբը, որտեղ հիշված է թվագրությունը, հետևյալն է. Թ Ձ[Խ]Ա Ի Ի ԽԱՆՈՒԹԵ[ԱՆ ՔԵՑՂԱ]ԹՈ[ՒՆՈՒ ԶԻՄ ԳԻՐ Է ԲԱ....:

Խանի անվան և թվագրության լրացումը հիմնավորում ենք հետևյալ կերպ: 13-րդ դարում տիրապետող խաներից միայն Քեյղաթուն Քթուս վերջավորությամբ անուն ունի, և որովհետև նա իշխել է 1291—1295 թվականներին, հետևապես թվագրի եղծված տասնավորը կլինի Խ (40), որով արձանագրության թվագիրը հավասար կլինի 1292 թվականին, այսինքն հիշյալ խանի իշխանության երկրորդ տարին:

